

ՎԼԱՍ ԿԱՌՆԻԱՑԻ

ՎԵՆԵՏԻԿԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ Վ.ԼՊ ՃԶ ԴԱՄՈՒՆ

(Տես էջ 262)

Մինչդեռ Փառասմից Ատենին պաշտօնեայն երկու զինուորաց հետ կը պատրաստուէր՝ ընդունած պատուէրն՝ ի գլուխ հանելու, Գէորգ, Վիկտորինէ և Պէրրո ալ կանուխ ելած կը պատրաստուէրն, սպասելով որոշուած ժամուն, յուրում պիտի երթային զտղան գարմանոցէն հանելու, և մօտ ծովեղերքը Պէրրօյի կոնսորյան պատրաստ կեցեր էր զիրենք տանելու, Դուրս ելլելու վրայ էին երբ գուուը զարնուեցաւ:

— Ո՞վ է . . . հարցուց Պէրրօ, շտապելով վերնազգեստն հագուելու։
 — Տէրութիւնը, պատափանեց ձայն մի՛ որ զինքը սարսափեցուց։
 — Տէրութիւնն ինչ բան ունի տանդ մէջ, հարցուց Գէորգ իւր կնոջը։
 — Չեմ գիտեր. բաց, Պէրրօ։
 — Ներս հրամէ, տէր, ըստ Պէրրօ գուուը բանալով։ Դռան քով կեցան պահպանութեան համար երկու զինուորք, մինչդեռ ուրիշ երկու զինուորք և Քառասմնի պաշտօնեայն մուան խոհանոցին մէջ։
 — Ի՞նչ ծառայութիւն կրնամ ընել ձեզ, հարցուց Գէորգ, որ զինուորական գգեասի տարապն ունէր։
 — Վիկտորինէ Տօլֆին, ձայնեց պաշտօնեայն։
 — Կինս է, ըստ Գէորգ, ահաւասիկ. ինչ կ'ուզէք իրմէն։
 — Յանուն վսեմափառ ներակուտին եկած եմ պահանջելու իրմէն մանուկ մի, որ անցած իրիկուն անյայտ եղած է. և կասկած կայ որ գուն յափշտակած մինիս, ըստ պաշտօնեայն՝ դանալով գէպ' ի Վիկտորինէ։
 — Մանուկ մի, ըստ Գէորգ, խիստ դէմք մի առնելով և ուշադրութեամբ կնոյ երեսը նայելով, որ այսպիսի պահանջման վրայ ապշար, շկրցաւ բառ մ'արտաքերել։

— Ի՞նչ, զմեզ տղող գող կը կարծեն, հարցուց Պէրրօ, կէս հերնական կէս վրդովեալ. և ո՞վ է այդ տղան՝ զոր տանս մէջ կու գան վնտուելու այսպիսի զինուորական մեծ հանդիսաւորութեամբ։
 — Ճէլթրուտ Սկրէմինի որդին է, վրայ բերաւ պաշտօնեայն։ — Ըսէ ուրեմն ինձի ինչ ըրիր տղան, ուր պահէր ես զինքը, աւելցուց նա՛ խօսքն առ Վիկտորինէ ուղղելով։
 — Բայց ես բան չեմ գիտեր, տէր. հարցմոնքդի ինձի համար բոլորովին նոր բան է։

— Եստ լւա. բնաւ մէկը պիտի շարժի այս տեղէն, ըստ Քառասմնի պաշտօնեայն՝ որովհետեւ կը Ժիտես, տունը խուզարկութեան ներքեւ պիտի ճէկմ։
 — Հրամանցէք, պատափանեց Պէրրօ. քիչ ժամանակի կորուստ պիտի ունենաք տունը խուզարկելու համար. սենեակ մը, այս խոհանոցս. և ահա վերը կը հասնիք։
 — Պաշտօնեայն՝ իւր ստորակարգելոց և Պէրրօյի հետ մոան սենեակը խռագիկելու։ Այս մինցին Գէորգ գառնալով կնկան հարցուց։
 — Փնտուած տղան միթէ այն չէ, որ ըսիր թէ մօրելքօրդ ժառանգն եղաւ։
 — Այս, պատափանեց խելճը բոլորովին գող ելած կրած յուզմունքէն։

— Բայց դուն կը դողաս, Վիկտորինէ, ըսաւ իմաստ կերպով ամուսինն։
 — Իրաւ է . . . և չեմ գիտեր ինչ պատճառաւ . . . Այս խօսքիս վրայ՝ վերա-
 գարձաւ պաշտօնեայն, և Գէորգ հարցուց իրեն.
 — Զեզ պատուէր տրուածը կատարեցիք։
 — Տղան չի գտնուիր, պատասխանեց նա։
 — Ես ալ գիտէի թէ պիտի չգտնես, վրայ բերաւ Պէրրօ։
 — Բայց Քառասորդ ատեանը պիտի գիտնայ գտնելու կերպը, պատասխա-
 նեց պաշտօնեայն։ Յետոյ դառնալով առ Վիկտորինէ՝ ըսաւ.
 — Վիկտորինէ Տօլֆին, յանուն Եղեռնադատ Քառասորդ Ատենին՝ ձերբա-
 կալուած ես։
 — Ձերբակալուած, գոչեցին ամէնքը միաբերան։
 — Ինչ . . . հօրեղորս աղջիկը բանտարկուի՞ . . . բայց ինչ բանի վրայ այս
 պիսի անարդ կասկած մի հաստատուած է . . . ով կ'ամբաստանէ զինքը՝ չգործած
 յանցանքի համար։
 — Տէր, ինչպէս ըսէի ես իրեն էրիկն եմ, ըսաւ Գէորգ, պատիւ ունեցող զի-
 նուոր եմ, և ինքինքս երաշխաւոր կ ընեմ կնկանս տեղ. վաղը ես անձամք կու
 գամ Պալատը, և . . .
 — Զեմ կրնար, վրայ բերաւ պաշտօնեայն։ Կինդ պէտք է ինձ ընկերէ, այս
 է ընդունած պատուէրս։
 — Բայց պիտի գիտնաք գէմ, ըսաւ լալով դժբախտ կինն, թէ արդեօք ինչ
 հիման վրայ ինծի դէմ այսպիսի գարցէլի ամբաստանութիւն եղած է։ Ըսէք,
 կ'աղաշէմ . . . Ապահով եղէք, տէր, որ ես անմեղ եմ . . . և սիրոս կը կնղեքի
 իմ վրայօրս այսպիսի գարշ ամբաստանութիւն մը լսելով . . . ըսէք ինձ, կը պա-
 զատիմ, և կամ ես ըսեմ որ միտքս ցնորից մէջ է։
 — Թէպէս և իմ պարտփս կ'արգելու ինձ զայդ, այսու հանդերձ կ'ուզեմ գո-
 հացընել զքեզ, պատասխանեց պաշտօնեայն։ — Տիկին, կը յիշմս այն օրը՝ յո-
 րում Ճէլթրուտ տիկնով, նորա որդույն և պաշտօնէին դիմաց՝ որ եկած էր ըս-
 տիպելու զքեզ որ տունը թողուս, ըսած լինի ճիշդ այս խօսքերս։ Ո՛վ գիտէ
 թէ այդ որդի, որ հիմա իմ ծառանցքորինն կը յախշանկէ, հարծածել աւելի
 շուստ պիտի շմենի, Այս խօսքերս քուկդ են, այնպէս չէ։
 — Դոնն այս խօսքերս ըսիր, հարցուց Գէորգ կնկանը։
 — Սիրելի Գէորգս, այն ժամանակ զուսուս իմս չէր։
 — Այս, ինքնը ցաւէն ինքիրմէն գուսու եկեր էր. հաւատա, ըսաւ Պէրրօ։
 — Այդ բանդ հետևանք չի բերեր որ տղան յափշտակուած շինի, վրայ բե-
 րաւ պաշտօնեայն կեզնութեամբ։
 — Բայց ես բան չեմ գիտեր, ըսաւ Վիկտորինէ, անմեղ եմ։
 — Անմեղ կամ մեղաւոր, իմ գիտնալու բանս չէ։ Հիմակուէիմա ինդրեմ հե-
 տըս եկուր, ցանլանքներն պիտի կարենան եղեռնագործութիւնը խոստովան-
 ցընել տալ քեզի։ — Յետոյ դառնալով կետն եղող զինուորաց ըսաւ. Պարտ-
 քերնիդ կատարեցէք։
 Վիկտորինէ, որ շուտ մը վինուորներէն պաշտօւեցաւ, ալէխարշ աղաղակ
 մ'արձակեց, և մարտծ ինկաս իւր ամսւանոյն և Պէրրօյի բազկացը մէջ։ Փո-
 խադրուելով այն կոնտույին մէջ, որ պիտի տանելու զինքը Ընկեցիկ տղայոց
 Դարմանոցը, ուր կը յուսար իւր որդին գտնել, տարուեցաւ ընդ հակառակն
 Դիսին Պալատը. և այն ահաւոր բանտերուն երկաթեայ գռներն բացուեցան
 ընդունելու դժբախտն Տօլֆին, որ քանի մի վայրկեան առաջ ինքզինքն երան-
 կութեան ծայրն հասած կը համարէր։

Դժբախտութիւններէ հալածուած հոգւոյ մի ուրախութիւնն ուրիշ բան չէ։

և

բայց եթէ երազ մի՝ ամենարագ փայլակ մի, որ կը գդուէ պատիր և վայրկենաւ կան երջանկութեամբ. յետոյ յանկարծ բոլորովին կը խաւարի. և մնուի պատրանքն աներկութանալով դժբախան վերստին կը գահավիժի մարդկացին թը- շուառութեանց անյատակ անդնդոյն մէջ:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴԻ

Անզգամորեան յաղթանակը

Վիկոտորինէ Տօլֆինի դէմ եղած ամբաստանութիւնն իրեն հիմն ունէր ըստ ինքեան անժխտեի իրողութիւն մի. վասն զի թէպէտ և այն դժբախտն միշտ իրեն արդար լինելը կը բողոքէր, բայց նորա դաստաւորներն համարելով զինքը իրը յափշտակող լլասոն Սկրէմնի, իրեն դէմ սկսան մանկասպանի մը դատա- վարութիւն. եղեռն մի, որ այն ժամանակ ծայրագյոն աստիճանի՝ գլխապար- տութեան պատճօք՝ կը պատուհասուէր:

Եւ ինչպէս յանափի կը հանդիպի այսօրինակ պարագայից մէջ, որ եղերան մի յայտնութիւնն կասկածի ներքեւ կը ճէց նոյն յանցանին հեղինակ համա- ռուածն նաև ուրիշ եղերանից՝ որք անպատուհաս մնացած լինին, որովհետեւ նշմարիտ յանցաւորքն կրցած են արդարութեան խուզարկութիւնն խուսափել զիրենք, այսպէս ուրիշ նաև դժբախտ Վիկոտորինէի վրայ սկսան կասկածիլ, եթէ ճշմարիտն ըսենք՝ ոչ յանիրաւի, իրեւ հեղինակ քաղաքին մէջ՝ ի գործ գրուած նաև ուրիշ ամէն յափշտակութեան մանկանց. ամենկին ուշ չդրուելով դաստաւորաց կողմանէ այն ամենայն բարի բարի վկասութեանց, որք նորա վա- րուց վրա կը տրուէին, և որք կը նկարագրէին վկիոտորինէ իրեւ հայելի մը պատուաւ կիանք վարողի իրեւ օրինակ ամենունական առաքինութեանց:

Այն թշուառ կինն Դքսին Պալատին բանտերան մէջ կը հեծէր, սպասելով որ իր գատաքննութեան պայտոնական հարցինը ձն կազմուելով զիրի առնուէի. մինչդեռ ստոյդ յանցաւորներն կ'ուրախանային իրենց անպատուհաս մնալուն վրայ. և պիտի տեսնենք որ բախտն այնպիսի կերպով և այնքան իրենց օգտին կը լլիէր, որ շատ իրենց վրայօք ամենահեռաւոր անգամ կասկածի տեղի, մա- սաւանոց թէ որ և իցէ կասկածանոց ստուերն ալ կը փարատէր:

Սակայն խորցէտն Սկրէմստար խելք մատծեց իր արժանաւոր տագրին հետախորհրդակցեաւ և որոշեւոր որ այլ ևս մատադ տղայոց շրպչին՝ քանի որ՝ ի գործ գրուած յափշտակութեանց համար յանցաւոր կարծուածին դէմ բացուած դաստամանն առ ՚ի կամ կը մնար, և թէ գոյն լինին որ և իցէ զինովներու և կամ աէրութենէն կասկածաւոր մարդկանց մարմիններով. վասն զի այս տեսակ մարդկանց անյայտանալն շատ աղաղակ լլի կրնար մէջտեղ հանել, որովհետեւ Հասարակապետութիւնն այնքան փոյթ չէր ըներ իմանալու քանի մը դատար- կապորու անեանց այս ինչ կամ այն ինչ պատճառաս մէջտեղէն վերցուելուն. միւս կողմանէ նոցա ընտանիքն չին կարող Քառասանից Ստոենին գիմասորին առվել ենել և եղածին վրայօք տեղեկութիւն տալ, որովհետեւ իրը հետեւանք զանազան ծածուկ եղեռնագրութեանց ի վկաս իրենց յայտնութենէն կը վախէին:

Գործերն այս վիճակի մէջ էին, երբ օր մի առաւօտը Պէրթ մուա Վլասի խանութը. այս վերջինս տեսնելով զինքը տիսուր և մտածութեան մէջ ընկցմած, իրեւ թէ բան չգիտանար, պատճառն հարցուց:

— Ի՞նչ կ'ուզես որ ունենամ, պատասխանեց նաւավարն, ազգականիս Գէոր դին հետ վենետիկյ կէսը պտղտեցանք, և կարող չեղանք կորսուած տղուն հետ քըն անդամ գտնելը Մինչդեռ այն իւելն կնիկն կը չարշրկոփ բանտին մէջ. օրեւը կանցնին, և դատաւորք զինքը յանցաւոք համարելով դատաստանը չուտ շուտ առաջ կը տանին, առանց ուզելու յայտնութիւններու, տեղեկութիւններու, աղայանաց սպասելու, ուստի կամ վաղը կամ միւս օր վիճու պիտի հրատակուի:

— Խեղճ Վիկոսորինէ, գոչեց Վլաս, որ մինչդեռ մէկ կողմէն սրտանց կ'ուրախանար իրաց այս կերպ իրեն յաջող ընթացք մ'առնելուն վրայ, միւս կողմանէ սակայն չէր կրնար սրտին մէջ լուցընել այն խճմնուաց ճայնը՝ որ անդադար զինքը կը հարցածէր, կանչելով իրեն. Մ'արդա պան, կրկնակի մ'արդասպան:

— Ուրիշ բնապէս կ'երթաց, Պէրքօ, հօրեղորդ աղջրկան դատոր, հարցուց Սիլվեստրա, որ վերէն նաւավարին ճայնը լսելով փութաց իխնել խանութը, վախնալով որ չինը թէ Վլաս անխոչեմ խօսք մը բերնէն փախցնէ:

— Նոր բան չկայ, Սիլվեստրա տիկին. նոյնը կը զուրցէի նաև տագերդ՝ թէ այն խեղճը հօն առանց յանցանք մ'ունենալու կը տանջուի, Աստուած գիտէ որ անպիտան ոճագործի մը պատճառաւ: Ախ, թէ որ կարենամ դիտնալ թէ ովք գողցեր է տղան, ապահով եղէք որ գահճն չէր թողուր զինքը խղճելու պաշտօնը կատարել:

— Աղդաէս մի խօսիր, սիրելի Պէրքօ, ըսաւ կեղծաւոր պառաւն. — մինչդեռ Վլաս գահճի անունը լսելով բոլորին գոյնը նետց և նորա ամէն մէկ կողերը գողալ սկան. — Վրէժինդորութիւնն չար մեզք մի է, աւելցուց Սիլվեստրա, և Աստուած կը հրամայէ ներելու մեր թշնամեաց, ինչպէս իխն ներեց իրեն խաշահանուաց:

— Ո՛հ սիրուն պառաւ, պատասխանեց Պէրքօ ուսերը թօթուելով, խնդրեմ այդ տեսակ քարոզի խօսքերով զլուխս մի ցացըներ, որոնք ՚ի գործնականին ամենամի բանի մը չեն գար: Նայինք, թէ որ եռ բռնցի հարուած մի տամ քեզի, գուն պիտի ընդունին զայն հանդարտ կենալով, թէ ընդ հակառակն ուրիշ մ'ալ դուն ինձ պիտի իշեցընես, և կամ գէթ երես պիտի ճանկըստես:

— Անկէ զատ, վրայ բերաւ Սիլվեստրա, ազգականդ գեռ անմեղ ալ չհրատարակուեցաւ:

— Ի՞նչ բանի նկատմամբ կ'ուզես որ անմեղ հրատարակուի:

— Ի՞նչ յանցանք որ գործած է:

— Բայց երբ իխն անմեղ է:

— Ամակյան վրան տարակոյս կայ:

— Ո՛վ է որ կը տարակուաի:

— Ժողովուրդն:

— Ո՛չ, ժողովուրդն չէ. ըսէ մանաւանդ շարագործներն: Խելն կինն տղաւ մի պէս անմեղ է:

— Բայց չես գիտեր, պնդեց Սիլվեստրա տագութեամբ, չես գիտեր որ կան վկացողներ թէ տեսներ են զինքը որ տղուն բնակած տանը շրս դին կը շրէր:

— Ամէնն ալ ստահօսութիւնք են, ամէնն ալ զուր ամբաստանութիւնք, որք հնարուած են այն խեղճ արարածին չարիք հասցընելու դիտմամբ:

— Աղդ ալ բաւական չէ, կ'ըսուի թէ զինքը ճամբուն վրայ տղան գիրկը տեսնող ալ եղած է:

— Ո՛վ է այդ զուրցողն. ուրիշ մէկը չի կրնար լինել, եթէ ոչ նոյն իխն գողցը, որ իրեն վրային որ և իցէ կասկած հեռու բռնելու համար չարութեամբ այդպիսի վատահամբաւ լուրեր մէջ տեղ կը քացընէ ազգականիս հակառակ,

որուն խեղճ ուսերուն վրայ հիմա ամէն կասկած, ամէն զրավարտութիւն կ'ուզեն բեացընել:

— Լու Պէրբօ, ըսաւ շուտ մը Սիլվեստրա, տեսնելով որ շատ առաջ գնաց խօսակցութիւնն, ես հարուստ չեմ, բայց ունեցածիս կէսը կու տայի զինքը բանաւէն խալսելու համար:

— Հնորհակալ եմ, Սիլվեստրա տիկին, զիտեմ որ բարի սիրտ մ'ունիս: Բայց մինչև որ գառնայ Գէորգ Դարմանոցէն, ուր գնացեր է Վիկտորինէի արշան ընդունելու համար, պնակ մի կատաձերք բեր ինժի. բայց նայէ որ սովորա կանէն աւելի միս գտննուի մէջը:

— Օ՛, ապա Պէրբօ, ըսաւ Վլաս՝ սկսելով պատուիրածը կատարել. տեսակ մը բաներ կան՝ որոնց վրայ լաւագոյն է շնուածել: Եթէ, ինչպէս սպահով եմ, ազգականդ անմեղ է, պիտի տեսնես որ նաև գատաւորներն՝ նորա անմեջութեան վրայ համազուած՝ իրեն՝ ինպասա վճիռ պիտի տան, և հետևաբար բանաւէն պիտի ազատի: Բայց, յայտնի է, համբերութիւն պէտք է, և թողով որ արդարութիւնն իւր ընթացքը կատարէ:

— Է՛՛, շատ աղեկ կը խօսիս դու Վլաս: Ամէն սաղմու Փատր Հօրով կը լըմըննայ Առածը կ'սու. Աղ որ շանը պոշէն բռներ է: Կրնայ զայն իրեն սեփականել:

Այս ինուրեմ ըստը Պէրբօ սկսաւ աւտել, բայց այնպիսի չկամութեամբ մի՞ որուն պատճառի ինքն ալ չէր զիտեր բացատրել:

Զախորդութիւնք, ինչպէս նաև ուրախութիւնք, նախընթացաբար կը զգացուին տեսակ մի գաղտնիք և անըմբունելի խորհրդով, որք առաջ կը պատրաստեն ընդունելու գայնս՝ որոց վրայ կը դիմեն: Եւ յիրաւի, քիչ մը վերջը՝ երեսի գոյնը գեղնած, աչքերը դուրս ցըցուած՝ խանութիւն շնմին վրայ տնկուցաւ Գէորգ. և այնքան սաստիկ էր նորա այլայտութիւնն՝ որ հոն հասնելով չկրցաւ բառ մ'իսկ արտարելու:

— Գէորգ, կանչեց Պէրբօ, արագութեամբ սեղանէն ցայտելով, բնչ ունիս, մոր է տղան:

— Տղան. Դարմանոցը չէ . . .

— Զկայ, մեռած է:

— Եթէ այդպէս լինէր՝ կը համակերպէի նախախնամութեան կամաց. բայց Դարմանոցին մէջ ուր քու ինժի յանձնած նշաններովդ գնացի, զուրցեցին որ այն ժաման և այն օրուան մէջ ամեննեին տղայ ընդունուած չէ:

— Կարելի բան չէ, պատասխանեց Պէրբօ խողովկ ձայնով:

— Երանի թէ լինէր. բայց Դարմանոցին պաշտօնական գրքերն ակնյայտնի կը խօսին. և ամէն բան ինժի պարզապէս կ'երեցընեն՝ որ իմ որդիս ալ յափշտակուած պէտք է լինի:

— Միթէ կարելի բան է, վրայ բերաւ Սիլվեստրա պառաւն կեղծեալ զարմացմար:

— Բայց, զուրցեց նաւալվարն, վկայ կեցեր է տղան Դարմանոց առնող կնիւ կըն. ինքը կրնայ այս բանիս մեկնութիւն մի տալ:

— Ծղածն իմանալով, պատասխանեց Գէորգ, շուտով այդ Գենովափէ կնկան տունը գնացի, որուն կինը յանձներ էր նոր ծնածը . . .

— Ի՞նչ ըսաւ քեզի, կտրեց խօսքը Պէրբօ անձկալից հետաքրքրութեամբ:

— Ոչինչ:

— Ոչինչ:

— Ինչպէս, հարցուցին Վլաս և Սիլվեստրա, որոյ աչքերն շար ուրախութեան փայլեր կ'արձեկէին:

— Այն խեղճ պառաւն երէկ իրիկուն մեռեր է:

— Մեռե՞ր է, գոշեցին երկու չարագործներն :

— Աստուած թող հոգւայն հանդիսաւ չնորհէ . բայց լաւագյն ըրած կը լինէր եթէ վաղը իրիկուն մեռնէր, գէթ բան մի կրնայինք իմանալ իրմէն . իսկ այժմ ոչինչ՝ դժբախտութիւն դժբախտութեան վրայ :

— Կրնամ՝ աւելի թշուառ լինել, հառաջեց Գէորգ . առանց կնոջ, առանց զաւակի . բայց ինչո՞ւ չենուայ պատերազմի գաւուին մէջ, քան թէ այս կերպ տան լուսէի :

— Խեղճ Գէորգ, ըսին Սիլվեստրա և նորա տագդըն . իրարու հետ աշքի նշան մ' ընելով, և երկուքն 'ի միասին մէկդի երթալով, ոչ այնչափ իրենց գործոց ուշ գնելով՝ քան որշափ որ և իցէ փորձանքէ ազատ մնալու համար :

‘Նաև այս անգամ անզգամութիւնն կը յաղթանակէր :

Երբ երկու ազգականներն առանձին մնացին, Պէրքօ հարկ համարեցաւ որ Գէորգ երթիր փաստաբանն մօտ, և նորա ձեռքով ընդունէր չնորհք՝ հսուելու բանահին մէջ Վ.իովորինէի հետ . որով կարելի լինէր մօրը ձեռքով տեղեկութիւն մի ստանալ տղուն անյայտանալուն վրայօք : Բայց ոչ առանց իրաւանց Պէրքօ, որ իւր ագիտութեան մէջ անգամ խելացի խորհրդածութիւններ կ'ընէր շատ անգամ, իւր ազգականէն բաժնուելու ժամանակ ըստ իրեն :

— Նայէ, Գէորգ, սիրտդ խաղաղ բռնէ : Դժբախտ ես, իրաւ է . բայց միտքդ պահէ այս խօսքերս, որք հիմ առածի մը բառերն են . Զարիքէ մի՛ շատ անհամ բարիք կ'ելլէ : Յուսա Գէորգ . . . և ով գիտէ . . .

Այսպէս ըստ ազնիւ նաւագարն, և իւր խօսքերն այնպիսի ձեւ մ' ընելով վեր խացուց՝ յորում կը տեսնուէր դժբախտութեանց ժայրը հասած սրտի մը խոր հըրդաւոր նախախնամութեան վրայ գրած բովանդակ յոյսն :

Շարտանակելի

ՀԱՌԻԹ

ԵՐ ԹԵ ԷՐ

Նթէ ազգայիթ պարբերակամ նայերէթ նրատարակութեանց մէջ սովորաբար գործածուած սխալմերում ցամկ մի շիմելու լինէիթք, կարծենք նամառօս բառգրքի մ' ըստուարութեան պիտի հաւասարէր : Այս սխալմերէթ մէկն ալ է «Եր» վերջաւորութիւնն վոխանակ «եր» ի, երբ հարկ լիմի որ և իցէ բայց ամցեալ «եմ» օժանդակ բայթ երրորդ գէմքին հետ գործածել : Այսպէս կը գրեմ, ողոք օրինակ, «Հէր տեսէր, էւր գը մացէր, բերէր էր, մացէր էր» և այլթ, և այլթ, առաջ մին դնելու որ այդ «էր» վերջաւորութիւնն ոչ թէ պիտի համածայթի իւր օժանդակ բայթ «էր» երրորդ գէմքին հետ, այլ պէտք է ըստ օրինաց տառափոխութեամ յառաջ զայ գրաբարի «եալ» ամցեալ վերբայթ վերջաւորութեամ : Եւ յիբավի, նախնիք կը գրէիթ «Դմ տեսնալ էր, մնք գնացեալ էր, մոցա մնկնալ էր» և այլթ . բայց յետ ժամամակաց այլ «եալ» վերջաւորութիւնն կորսութեանով իւր «ո» տառը՝ եղեր է «ել», որ կը գրուի միշտ զարոց նայերենի մէջ, այսպէս «տեսել էր, մնացել էր» և այլթ . և ըստ օրինաց փոխանակութեամ տառից «լ» կակուր տառ փոխուեր է հուսկ ուրեմն «ը» մայ տառին հետ, և կը հնչուի այժմ «տեսեր էր, չը մայեր, ամցեր էր», և ոչ թէ «տեսէր, մայէր, ամցէր» և այլթ, որ յայտ մի սխալ է ըմբգէմ ուղղագործեամ :